ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2021, հ. 74, N 3, 51-62
Известия НАН РА Науки о Земле, 2021, т. 74, N 3, 51-62
Proceedings NAS RA, Earth Sciences, 2021, v. 74, N 3, 51-62

ԵՐԿՐԱՖԻԶԻԿԱ

ԵՎՍ ՄԵԿ ԱՆԳԱՄ IX ԴԱՐԻ ԴՎԻՆԻ ԱՎԵՐԻՉ ԵՐԿՐԱՇԱՐԺԵՐԻ ՄԱՍԻՆ. ԵՐԿՐԱՇԱՐԺԵՐԻ ՊԱՏՃԱՌԱԾ ԱՎԵՐՈՒՄՆԵՐԸ

Հարությունյան Ռ.Ա.

ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
0019, Երևան, Մարշալ Բաղրամյանի պող. 24ա,
Հայաստանի Հանրապետություն
E-mail: roubenhar@web.am
Հանձնված է հրատարակչություն 21.03.2021

Սույն հոդվածում շարունակվում է, IX դարի Դվինի ավերիչ երկրաշարժերի վիճահարույց բնութագրերի պարզաբանմանը ուղղված, պատմական վկայությունների և դաշտային ուսումնասիրությունների արդյունքների վերլուծությունը: Այստեղ՝ հոդվածաշարի երկրորդ հոդվածում, հիմնական ուշադարությունը ուղղված է երկրաշարժերի հետևանքով առաջացած ավերվածությունների տարածքների ճշտմանը:

Հանգուցային բառեր. Դվին, պատմական երկրաշարժ, ավերումներ:

Դվին քաղաքը IX-րդ դարի երկրորդ կեսին. շինությունները, բնակչությունը, երկրաշարժերի հետևանքները

Ըստ հայ մատենագիրների, Դվին քաղաքի հիմնադրումը վերագրվում է Արշակունյաց Խոսրով Կոտակ թագավորին, որը 332 թվականին նախաձեռնել է Դվինում թագավորական պալատի շինարարությունը, իր արքունիքի ու Արտաշատի բնակչության տեղափոխումը դեպի նոր մայրաքաղաք և նրա շարջակայքում նոր անտառների տնկումը (Խորենացի, 1997; Ղաֆադարյան, 1966):

Սակայն քաղաքի պատմական տարածքի պեղումների արդյունքում պարզվել է, որ այն հանդիսանում է մ.թ.ա. III հազարամյակից մինչև XIII դարն ընդգրկող բազմաշերտ հնավայր (Քոչարյան, 2014): Հնում Դվինի միջնաբերդ-բլուրը իր ռազմավարական դիրքի բերումով՝ Արարատյան դաշտի այդ մասի ամենաբարձր կետը, հանդիսացել է կարևոր սրբատեղի-ամրոց (նկ.1): Այն բազմիցս՝ ուրարտացիների (մ.թ.ա. I հազ. սկզիբ), հռոմեացիների (I դար), պարսիկների (V դար) կողմից, հիմնահատակ ավերվել, հրկիզվել է և հետագայում, փլատակների համահարթեցված տարածքում, կառուցվել են նոր շինություններ: Վերջիվերջո, մեծազանգված կավակերտ պարիսպների և պալատական շենքերի փլատակների շնորհիվ, Դվինի միջնաբերդի բլուրը իր շրջապատի հարթության համեմատությամբ այժմ ունի 30

մետր բարձրություն: Բլրի գագաթը ունի միանգամայն հարթ մակերես և հեռվից այն թողնում է կտրած կոնի տպավորություն: Գագաթի հարթության մակերեսը հավասար է մոտավորապես 4000 քառակուսի մետրի, ընդորում լայնքը հյուսիս-հարավ ամենալայն տեղում 60 մետր է, իսկ երկարությունը արևելքից դեպի արևմուտք՝ 85 մետր: Գագաթից մոտ 9-10 մետր ներքև, բացվել են մ.թ.ա. II և I հազարամյակների ցիկլոպյան պատերի մեծազանգված քարե պատնեշներ: Միջին դարերում միջնաբերդ-բլրի լանջերը ունեցել են աստիճանաձև տեսք և ծածկված են եղել բնակելի մանր տներով ճիշտ այնպես, ինչպես լինում են մեր լեռնային շրջանների գյուղերը, որտեղ մեկի տան կտուրը մյուսի բակ է հանդիսանում (Ղաֆադարյան, 1952):



Նկ.1. Դվինի գծապատկերը (միջնաբերդը - 1 և կենտրոնական թաղամասը՝ կաթողիկե եկեղեցին - 2, կաթողիկոսարանը – 3, բազիլիկ վկայարանը – 4; արհեստական լիճ - 5):

Միջնաբերդի շուրջը կառուցված է եղել ստորին բերդը, որն ընդգրկում է մի անկանոն քառանկյունի տարածք մոտ 10 հեկտար մակերեսով, որի մեկ երրորդը զբաղեցնում էր արհեստական լիճը: Ստորին բերդի մեջ ապրել են Դվինի պաշտոնեությունը, իշխանական դասը, սպայակույտը և զորքը:

Բերդից հետո քաղաքի ամենահին մասը կենտրոնական թաղն է, որը գոյություն է ունեցել դեռևս մ.թ.ա. I-ին հազարամյակի սկզբին: Այն ունեցել է մյուս թաղերից բաժանող թաղամիջյան կավակերտ պարիսպ: Թաղի կենտրոնական մասում տեղավորված է եղել, III-րդ դարում քարով ու կրաշաղախով կառուցված, եռանավ մեհյանը, որը VII դարի սկզբում վերակառուցվել է, որպես խաչաձև հատակագծով կենտրոնագմբեթ եկեղեցի (Քալանթարյան, 1992): Սրա հարևանությամբ են գտնվել միանավ բազիլիկ վկայարանը և կաթողիկոսի պալատը: Այստեղ ապրել է Դվինի բարձր հոգևորականությունը և թաղի ծայրամասերում ապրել են նաև իշխաններ ու հարուստ վաճառականներ: Այս թաղում բացվեցին նաև չքավոր բնակիչների տներ, որոնց պատերը

շարված էին հասարակ գետաքարերով և հում աղյուսով: Բացվեց նաև երկհարկանի շենք կավակերտ պատերով, բայց ներքուստ՝ ճոխ զարդարված, որը հավանաբար պատկանում էր մի հարուստ արհեստավորի (Ղաֆադարյան, 1952):

Պեղումների արդյունքները ցույց են տալիս, որ միջնադարյան Դվինում շինությունների մեծ մասը եղել են կավակերտ, քանի որ կավը եղել է տարածքի ամենատարածված շինանյութը (Ղաֆադարյան, 1952).

- *քաղաքի չքավոր բնակչությունը, ինչպես նաև շրջակա գյուղերի շինականները, ապրել է կավաշեն հյուղակներում, որոնց պատերը շինված են եղել գլաքարերով կամ հում աղյուսով, իսկ ծածկը եղել է կամ հազարաշեն, կամ հարթ կտուր՝ գերաններով, ծղոտով և հաստ հողաշերտով շինված, ինչպիսիք մինչև այսօր էլ գուցե դեռ կան մեր գյուղերում և քաղաքներում;*
- *հարուստ բնակիչները ապրել են կավակերտ, սակայն երկհարկանի շինություններում, որոնք ունեցել են հարուստ ներքին հարդարանք, իսկ նկուղները ունեցել են քարաշեն հիմքեր ու աղյուսաշեն թաղակապ ծածկ;*
- *ազնվականների մի մասը ապրել է կավաշեն պալատներում;*
- *Դվինի բերդի, միջթաղային պատերը և այլ պատվարները նույնպես շինված են եղել կավից;*
- *եղել են նաև սրբատաշ քարով և կրով կառուցված կրոնական և քաղաքացիական շինություններ, այդ թվում եկեղեցիները, կաթողիկոսարանը, այլ պալատական շինությունները և բազմաստյուն մեծ քարավանատունը, քարաշեն աշխարհիկ շենքերից մի մասն ունեցել են թաղակապ ծածկ՝ շինված սրբատաշ քարով:*

Հատկանշանակ է նաև, որ 5-րդ դարում Դվինի միջնաբերդում պարսիկները ավերել են Արշակունյաց արքայանիստ տուֆակերտ պալատը և նրա փլատակների վրա կառուցել են մարզպանի կավակերտ պալատը, որը հետագայում նստավայր է եղել նաև արաբ ոստիկանների համար:

336-885 թվականներին Դվինը եղել է Հայաստանի վարչական կենտրոնը և IX-րդ դարում Դվինը հասել է իր առավել ծաղկուն շրջանին՝ բնակչության թիվը կազմել է ավելի քան 100 հազարը: Սակայն 863թ. և առավելապես 893թ. ավերիչ երկրաշարժերը խաթարեցին նրա զարգացումը:

Ահա թե ինչպես են նկարագրում այդ երկրաշարժերի հետևանքները ժամանակակից պատմագիրները:

Ըստ Դրասխանակերտցու (Դրասխանակերտցի, 1996).

<u>Առաջին երկրաշարժի մասին.</u> *«Բայց այդ ժամանակներում* (863թ.) *Դվին քաղաքում սարսափելի երկրաշարժ է լինում, և շատ տներ, պարիսպներ, ապարանքներ ցնցվում ու փլուզվում են: Առհասարակ քաղաքը դղրդում է ու քանդվում, և անհամար մարդիկ են մահանում: Եվ այնպիսի վտանգ ու տագնապ էր սպառնում, որ ոչ ոք ներսում չէր*

մնում, այլ դուրս գալով հրապարակներն ու փողոցները՝ նրանք հալումաշ էին լինում ու հառաչում: Իսկ ձմեռային ցրտաշունչ սառնամանիքը էլ ավելի էր թուլացնում ու (հուսահատեցնում) նրանց, որովհետև շատերը մրսում էին ու մահանում: Եվ Զաքարիա սուրբ հայրապետը ուժգին աղոթքներով ու մշտամռունչ պաղատանքներով աղերսալի աղոթք էր մատուցում բարեգութ Աստծուն և երկնային ազդեցությամբ վերացնում աստվածասաստ բարկությունը՝ Քրիստոսի եկեղեցին անվնաս պահելով վտանգի բազմաբեր ցասումից:»

<u>Երկրորդ երկրաշարժի մասին.</u> *«Այդ ժամանակ (893թ.)՝ գիշերը, հանկարծ սաստիկ երկրաշարժ է լինում Դվին քաղաքում՝ դրա բնակիչներին խուճապի մատնելով, սարսափեցնելով դղրդյուն, կործանում առաջ բերելով՝ հիմնիվեր տապալում: Եվ ամբողջովին փուլ ածելով պարիսպների պատերը, երևելի մարդկանց ապարանքները, ռամիկների տները՝ դրանք մի ակնթարթում ավերակի է վերածում: Դղրդալով քանդվում, ավերվում ու վայր են թափվում նաև կաթողիկոսարանի աստվածաշեն եկեղեցին և այլ հաստահեղյուս վկայարաններ. Դա տեսնողներին երևում էր իբրև քարքարոտ, խորդուբորդ ու սարսափելի ավերակ: Մարդկանց մեծ բազմություններ, մնալով հարկերի տակ, շնչասպառ են լինում, հողի մեջ թավալվելով և հողի տակ խեղդվելով: Եվ դիակույտ բազմության այն կոտորածն էր, որ ավելի կարծր, քարեղեն ու անկարեկից դարձնելով միտքը՝ նրան համակում էր մեծ ողբով ու արտասվաթոր լաց ու կոծով: Չեմ ուզում ասել մարդկանց ազգակից, կարեկից, լծակից հարազատների մասին, որոնց կականը, ողբը, գույժից ճչալը, կանչելը, գոռալը, վայնասունը և երգող կույսերի, սնազգեստ կանանց, վշտահար հեծությամբ սգացող տղամարդկանց ձայները բարձրանում ու մինչև երկինք էին հասնում: Իսկ դիակները այնքան շատ էին, որ գերեզմանոցները չէին բավարարում և շատերին գցում էին վիհերը, խորխորատները, փոսերը ու ծածկում: Եվ այսպես սաստիկ վախը ահաբեկում էր բոլորին՝ ահով պաշարելով ողջ մնացածներին:»*

Թովմա Արծրունին (Արծրունի, 1985) տալիս է այդ երկրաշարժերի այսպիսի նկարագրություն և հետևանքների համեմատություն.

«Հայոց վրա (Սմբատի) *թագավորելու երրորդ տարում* (893թ.) *աստվածատուր բարկությամբ անդնդաշարժ խառնակումով ամենախորքերում միմյանց բախված բարկության հողմերը... և խավար ջրերի անդնդաքակ կոհակների հետ սասանեցին երկրի խոր ընդերքի կարծր, ծանրալի ու անկշռելի անբավությունը և վեր մղեցին մինչև երկրի երեսը՝ Արտաշեսի քաղաքի դիմաց, որին անվանում են Բլուր, և որտեղ է թագավորանիստ Դվին քաղաքը՝ մարդաշատ, պատվարված պարսպավոր պատնեշներով, հղփացած ու հափրացած վաճառականությամբ, տեսակ-տեսակ պղծություններով: Այն հիմքից տապալվեց, դժողքի պես լայն բացեց իր բերանը, շատերին վիժեցրեց անդունդը: Նրանցից ոմանց տներն իսկ գերեզմաններ դարձան իրենց համար: ...Բայց Դվինի քաղաքացիների քարեղեն սրտերի պատճառով էր, որ*

չխնայեց նրանց: Սրբատեղիները, աղոթքի տները նույնպես ներգործ-վեցին շարժից, ճեղքվեցին, պատերը խախտվեցին...

...Ասվում է, թե շարժի խեղված մարդկանց թիվը ավելի քան 70 հազար էր: Այս շարժն ավելի սաստիկ էր, քան այն, որ եղավ հայոց կաթողիկոս Զաքարիայի ժամանակ, հայերի գերությունից 7 տարի հետո (863թ.):»

Արաբ պատմագիր ալ-Թաբարին (839-923) (al-Tabari, 1985) այսպես է նկարագրում 893 թվականի երկրաշարժը.

«...տեղի ունեցավ երկրաշարժ: Առավոտյան քաղաքը անհետացել էր: Տներից մնացել էին մի քանիսը միայն՝ մոտ հարյուրը: Մինչև նամակի գրվելը, Դաբիլի բնակիչները թաղել էին փլատակների տակից հանված երեսուն հազար զոհված: Ավերումներից հետո նրանք զգացել էին ևս հինգ երկրաշարժ: Ինչպես հաղորդել է նրանցից մեկը, փլա-տակներից հանված մեռածների թիվը կազմում է հարյուրհիսուն հազար:»

Ահա թե ինչ է գրում X դարի Դվինի մասին արաբ աշխարհագետ ալ-Մուկադդասին (946-1000). «Դաբիլը (Դվինը) խոշոր քաղաք է, ունի անառիկ բերդ (միջնաբերդ): (Նա Արդաբիլից մեծ է:) Նրանում շատ են բարիքները, անունը հռչակված է, բուրդը նշանավոր է, գետը հորդա-ռատ: Նա շրջապատված է այգիներով: Ունի հինավուրց արվարձան և ամրակուռ բերդ: Նրա շուկաները խաչաձև են ու նրա մերձակա հո-ղերը հրաշալի: Մայր մզկիթը բարձր բլրի վրա է և նրա կողքին է եկեղեցին: Ունի միջնաբերդ: Նրանց շենքերը կավից ու քարից են: Բազմաթիվ դռներ ունի, որոնցից են Քայդարի (Քինդարի) դուռը, Տփխիսի դուռը և Անիի դուռը: Սակայն նրա (բնակչության) մեծա-մասնությունը կազմում են քրիստոնյաները և նրանց ազնվականները: Նրա բնակչությունը պակասել է և նրա բերդն ավերվել է:» (Արաբական աղբյուրներ, 2005):

Վերը շարադրված պատմական նկարագրությունները և Դվինի պե-ղումների արդյունքները վկայություն են, որ.

- 863 թվականի երկրաշարժի ժամանակ հիմնականում լուրջ վնասվել կամ ավերվել են չքավոր բնակիչների գլաքարերով ու հում աղյուսով կառուցված կավաշեն հյուղակների մի մասը, որոշ կավակերտ երկհարկանի շինություններ և կավաշեն պա-րիսպներ, բայց եկեղեցիները չեն վնասվել;
- 893 թվականի երկրաշարժի ժամանակ քաղաքը հիմնահատակ ավերվում է՝ եկեղեցիները, պալատները, քաղաքային շուկան, և մնում են կանգուն, բայց վնասված, մոտ հարյուր կառույց, այդ թվում կաթողիկոսարանը, որը հետագայում վերակառուցվում է որպես մզկիթ (Քալանթարյան, 1992):

Դվինի երկրաշարժերի հետևանքները այլ վայրերում

863 թվականի երկրաշարժի ազդեցության մասին այլ տեղերում, բացի Դվինից, պատմական վկայություններ չկան: Սակայն հայտնի է,

որ 893 թվականի երկրաշարժի հետևանքով ավերումներ են տեղի ունեցել ոչ միայն Դվինում: Ըստ Թովմա Արծրունու վկայության, երկրաշարժից չեն վնասվել Վաղարշապատը (Նոր քաղաքը) և Զվարթնոց տաճարը, բայց ավերվել է մի լեռնային սրբատեղի, ուր փլատակների տակ են մնացել Ռշտունիքի եպիսկոպոսը և իր յուրայինները (Արծրունի, 1985).

«Այնտեղ էր նաև Ռշտունյաց սրբազան եպիսկոպոսը՝ երանելի Գրիգորը, որը յուրայինների հետ չկարողացավ փրկվել, քանի որ նույն ժամանակ աղոթում էր լեռան վրա: Նրանցից ոմանք նույն շարժից մնացին այն տեղ փլվածքի տակ:

Բայց երանելի հայրապետ տեր Գևորգը տրտմեց ավելի սաստիկ... ապա թողեց Դվինը և գնաց բնակվեց Նոր քաղաքում, մեծ եկեղեցու մեջ, որը սուրբ Գրիգորի անունով շինել էր երանելի տեր Ներսես երկրորդը /երրորդը/՝ *հայոց կաթողիկոսը:»*

Դվինի մերձակայքում չկան լեռներ ու քարանձավներ, որտեղ ցնցումները կարող էին առաջացնել փլվածքներ և սողանքներ: Ըստ Ամբրասեյսի, դրանք կարող էին առաջանալ, այսպես կոչված, Արտաշատի սարահարթի վրա (Ambraseys et al., 1982), որի տեղը հստակ որոշված չէ: Հիմնվելով վերը բերված Թ.Արծրունու վկայության վրա, կարելի է պնդել, որ Ամբրասեյսը սխալվում է նաև կարծելով, թե կաթողիկոսը Դվինից տեղափոխվել է Արտաշատ՝ Վիրապի վրա կառուցված Սբ.Գրիգոր եկեղեցի (նկ.2-1), շփոթելով այն Վաղարշապատում (Նոր քաղաքում) գտնվող Սբ.Գրիգոր եկեղեցու՝ Զվարթնոցի (նկ.2-2, 3), հետ: Ամբրասեյսի այդ սխալմունքը հավանաբար բացատրվում է նրանով, որ նա մեծապես հիմնվել է արաբական աղբյուրների վրա, քանի որ, ըստ ալ-Մուկադդասիի (946-991) տեղեկության, հիշյալ տաճարի մոտակայքում են կանայք հավաքում «ալ-կիրմիզ»՝ որդան կարմիր, իսկ ըստ Բալազուրիի (820-892) դա հանդիսանում էր այդ ժամանակների Հին Արտաշատի՝ ալ-Կիրմիզ գյուղի, շինական բնակչության զբաղմունքներից մեկը (Արաբական աղբյուրներ, 2005): Կասկածից վեր է, որ երկրաշարժի ժամանակակից Արծրունին ավելի ստույգ տեղեկություններ է հայտնում այն ներսեսաշեն Սբ.Գրիգոր եկեղեցու մասին, որը գտնվում էր Վաղաշապատում և ուր տեղափոխվել էր կաթողիկոսը, քան հաջորդ դարի արաբ պատմագիր ալ-Մուկադդասին:

Կարախանյանի և համահեղինակների կարծիքով միակ տեղը, ուր կարող էին առաջանալ փլվածքները, Գեղարդի (նկ.2-4) քարանձավներն են (Karakhanian et al. 2011, 2016): Սակայն, ըստ իս, ավելի հավանական է և հիմնավորված, որ Ռշտունյաց եպիսկոպոսը յուրայինների հետ աղոթելիս է եղել Վայոց Ձորում գտնվող Խոտակերաց վանքի տարածքում (նկ.2-7), որը ներառնում էր Արուստամուղ գյուղի եկեղեցին, երկու փոքր մատուռ հարևան ձորակներում և շրջակա քարանձավները (Հարությունյան, 2019): IX դարի վերջում Վայոց Ձորի արևմտյան շրջանի ավերման մասին, հաղորդում է XIII դարի պատմագիր Ստեփանոս Օրբելյանը (Օրբելյան, 1986). *«Եվ մեր աշխարհի*

ավերումից հետո այդ կրոնավորները ցրիվ եկան, ու այնտեղը ավերակ և անբնակ մնաց մինչև Սյունյաց տեր Աշոտ իշխանի օրերը: ...նա հրամայում է վերստին շինել եկեղեցին ու վանքը՝ (այնտեղ) հավաքելով կրոնավորներին:» Այսինքն, հարևան ձորակներում գտնվող, վանքի շինությունների և քարանձավների միաժամանակյա ավերման պատճառով, ինչը իհարկե կարող էր լինել հզոր երկրշարժի հետևանք, վանականները լքում են տարածքը և վերադառնում են լոկ այն ժամանակ, երբ Աշոտ իշխանը կառուցում է նոր Խոտակերաց վանքի շինությունները:

Ըստ Կարախանյանի և համահեղինակների Խոտակերաց վանքը ավերվել է երկու անգամ՝ ինչպես 863 թվականի, այնպես էլ 893 թվականի Դվինի երկրաշարժերի ժամանակ (Karakhanian et al. 2011, 2016): Ինչը ըստ իս սխալմունք է և իրականում Խոտակերաց վանքը ավերվել է առաջին անգամ 893 թվականի Դվինի երկրաշարժի ժամանակ, իսկ երկրորդ անգամ ավերվել է սողանքի հետևանքով 908 թվականին (Հարությունյան, 2019):



Նկ.2. Դվինի IX դարի երկրաշարժերի ազդեցությունների տարածքը (ըստ Karakhanian et al. 2016, հոդվածի հեղինակի փոփոխություններով): Քարտեզի նշումները՝ 1 – ակտիվ խզվածքներ, 2 – մասնակի ակտիվ վրաշարժեր, 3 – բնակավայրեր և պատմական հուշարձաններ, 4 – պատմական երկրաշարժեր, 5 – բնահողի արագացումների գոտիները Գառնու խզվածքում M7 հզորությամբ երկրաշարժի դեպքում: Հապավումներ՝ Գ – Գառնու ակտիվ խզվածքը, Վ – Վեդու վրաշարժը: Բնակավայրերը և պատմական հուշարձանները՝ 1 – Խոր Վիրապ (Սբ. Գրիգոր, Հին Արտաշատ), 2 – Վաղարշապատ (Նոր քաղաք), 3 – Զվարթնոց (Սբ.Գրիգոր), 4 – Գեղարդ, 5 – Գառնի, 6 – Բայբուրդ (Սբ.Գրիգոր), 7 – Խոտակերաց վանք:

Ա.Կարախանյանը դաշտային ուսումնասիրությունների արդյունքում հանգել է ևս երկու վիճելի եզրակացության՝ Գառնու ամրոցը (նկ.2-5) և, նրանից ոչ հեռու գտնվող, Բայբուրդի եկեղեցին (նկ.2-6), նույնպես ավերվել են IX դարի երկրաշարժերի ժամանակ (Karakhanian et al. 2011, 2016).

1) Ելնելով այն փաստից, որ Գառնու ամրոցի ավերված պատերի տասնյակ քարեր IX–X դարերում օգտագործվել են որպես գերեզմանաքարեր, իսկ գերեզմանաքարերից մեկը թվագրված է Հայոց 328 թվականով՝ 879թ.[1], ենթադրվում է, որ երկրաշարժը տեղի է ունեցել մինչև այդ թվականը և դա կարող էր լինել Դվինի առաջին՝ 863 թվականի, երկրաշարժը:

Սակայն դժվար է պատկերացնել, թե տեղի ունենար հզոր երկրաշարժ, որը կավերեր բերդի ամրակուռ պատերը, իսկ նրանց միջակայքում գտնվող շատ ավելի նրբագեղ տաճարը կմնար անվնաս: Ավելի հավանական է, որ Գառնու ամրոցի պատերը ավերել են արաբները, ինչպես նրանք ավերել էին, ըստ իբն-Հաուկալի (X դար), Մարաղա ու Արդեբիլ քաղաքների պատերը (Արաբական աղբյուրներ, 2005) և նաև հզոր պատերով Զվարթնոցը (Այրիվանեցի, 1860; Գանձակեցի, 1982): Ըստ իս, կարելի է պնդել՝ վկա Գառնու տաճարը, որ I - XXI դարերի ժամանակամիջոցում Գառնու ամրոցը և տաճարը երկրաշարժից ավերել են միայն մեկ անգամ՝ 1679 թվականին:

2) Բայբուրդի Սբ.Գրիգոր եկեղեցին գտնվում է Գառնու ամրոցից 5,2կմ հեռու դեպի հարավ-արևելք, այսինքն ավելի մոտ է Գառնու երկրաշարժի վերկենտրոնին: Ըստ կառուցման ոճի և հունական արձանագրության առկայության վերագրվում է 4-5 դարերին: Կարծիք է հայտնվում, որ եկեղեցին կրում է երկու երկրաշարժերի ազդեցությամբ առաջացած ավերումների հետքեր: Եկեղեցու պատերը կառուցված են եղել խոշոր՝ 0,7×1,2×0,7մ չափերով, լավ մշակված բազալտե քարերով (նկ.3,I): Ակնհայտ է, որ եկեղեցին լուրջ վնասված է եղել և վերակառուցվել է ավերումից հետո գլաքարերով (նկ.3,II): Գլաքարերի արանքում գտնվող պատուհանի փայտի կտորի հասակագրումը տվել է 1690–1730 թվականների միջակայքը: Այսինքն վերակառուցումը կատարվել է Գառնու 1679 թվականի երկրաշարժից հետո: Մուտքի կողապատի շաղախից հանվել է փայտի տաշեղ (նկ.3,1), որի հասակագրումը տվել է 920–1050 թվականների միջակայքը: Սրանից ելնելով էլ կարծիք է առա-

[1] Համաձայն հոդվածի գրախոս Ա.Վ.Ավագյանի տրամադրած աղբյուրի՝ https://www.facebook.com/armchurchmoscow/posts/1399959976833398/, խոսքը գնում է հնագագույն թվագրված խաչքարի մասին, որը հայտնի է որպես «Կատրանիդե թագուհու խաչքար»: Նաև ուշագրավ կարծիք է հայտնվում, որ այն փորագրված է արաբների կողմից ավերված Գառնու ամրոցի պարսպի քարերից մեկի վրա, ինչը համընկնում է բերդի ավերման մասին մեր, այլ փաստարկներով հիմնավորված եզրակացության հետ, որը բերված է հոդվածի հաջորդ պարբերության մեջ:

ջացել, թե եկեղեցին հիմնահատակ ավերվել 893 թվականի երկրաշարժի ժամանակ և հիմքից նույնությամբ (?!) վերաշինվել է:

Այս վարկածի համաձայն, պետք է կարծել, որ այդ երկրաշարժը ավելի հզոր է եղել, քան 1679 թվականի երկրաշարժը, իսկ նրանց վերկենտրոնները համընկել են: Ինչը անհավանական է, քանի որ հնարավոր վերկենտրոնից մոտ 15-20 կմ հեռավորության վրա գտնվող Դվինում եկեղեցիները մնացել են անվնաս և ավերվել է միայն կավաշեն շինությունների մի մասը, իսկ Գառնու տաճարը կանգուն էր մինչև 1679 թվականը: Ըստ իս ավելի հավանական է, որ նշված ժամանակամիջոցում կատարվել է եկեղեցու մուտքի կողապատի նորոգում, որի շաղախում և եղել է փայտի տաշեղը (նկ.3,1):



Նկ.3. Բայբուրդի Սբ.Գրիգոր եկեղեցին (Karakhanian et al. 2016) A –ճակատային պատը ներսից, B – ճակատային պատը դրսից, C – արևմտյան պատը ներսից: I – IV դարում եկեղեցու կառուցման ընթացքում օգտագործված բազալտե մեծաքարերը, II – X–XI դարերում ենթադրական վերաշինության ժամանակ օգտագործված համեմատաբար փոքր քարերը, III – Գառնու 1679թ. հունիսի 4-ին տեղի ունեցած երկրաշարժից հետո վերաշինությունը գլաքարերով: C14 հասակագրման արդյունքները՝ 1 – 920–1050թ.թ. հասակի փայտի տաշեղի տեղը մուտքի կողապատի քարերի արանքում, 2- 1690–1730թ.թ. հասակի փայտի կտորի տեղը պատուհանում:

Ինչ վերաբերվում է եկեղեցու առաստաղը համեմատաբար փոքր քարերով շինված լինելուն, ինչը եկեղեցու վերաշինման վկայություն է համարվել (նկ.3,II), ապա կարելի է պնդել, որ այդպիսիք օգտագործվել

են ի սկզբանե, քանի որ դյուրին և նպատակահարմար չէ այդպիսի փոքր եկեղեցու թաղապատ առաստաղը կառուցել նրա պատերը կազմող մեծաքարերով:

Հիմնվելով վերը շարադրված վերլուծությունների վրա, Ա.Կարախանյանի և գործընկերների կարծիքը, թե.

- Խոտակերաց վանքը ավերվել է ինչպես 863 թվականի, այնպես էլ 893 թվականի երկրաշարժերի հետևանքով,
- Գեղարդի քարանձավներում առաջացել են փլվածքներ 893 թվականի երկրաշարժի հետևանքով,
- Գառնու ամրոցը ավերվել է 863 թվականի երկրաշարժի հետևանքով,
- Բայբուրդի Սբ.Գրիգոր եկեղեցին ավերվել է նաև 893 թվականի երկրաշարժի հետևանքով, ըստ իս հիմնազուրկ է:

Եզրակացություն

Ի մի բերելով պատմական վկայություններից և պեղումների արդյունքում ստացված տեղեկությունները կարելի է եզրակացնել, որ.

- 863 թվականի երկրաշարժի ժամանակ հիմնականում լուրջ վնասվել կամ ավերվել են չքավոր բնակիչների գլաքարերով ու հում աղյուսով կառուցված կավաշեն հյուղակների մի մասը, որոշ կավակերտ երկհարկանի շինություններ և կավաշեն պարիսպներ,
- Այլ տեղերում 863 թվականի երկրաշարժի առաջացրած ավերումներ վկայված չեն, սակայն կարելի է ենթադրել, որ Դվինի մերձակա գյուղերում որոշ կավաշեն տներ նույնպես ավերվել են,
- 893 թվականի երկրաշարժի ժամանակ քաղաքը հիմնահատակ ավերվել են՝ եկեղեցիները, պալատները, քաղաքային շուկան, և մնացել են կանգուն, բայց վնասված, միայն մոտ հարյուր շինություն, այդ թվում կաթողիկոսարանը,
- 893 թվականի երկրաշարժի հետևանքով ավերումներ են տեղի ունեցել ոչ միայն Դվինի տարածքում, այլ նաև Վայոց Ձորի արևմուտքում, մասնավորապես ավերվել են Խոտակերաց վանքի շինությունները և քարանձավային աղոթարանները և կացարանները:

Վերջին ժամանակների ընթացքում կատարված դաշտային ուսումնասիրությունների արդյունքում ստեղծված պատկերացումները, թե.

- 863 թվականի երկրաշարժի հետևանքով ավերվել են նաև Խոտակերաց վանքն ու Գառնու ամրոցը,
- 893 թվականի երկրաշարժի հետևանքով ավերվել է նաև Բայբուրդի Սբ.Գրիգոր եկեղեցին և առաջացել են փլվածքներ Գե-

ղարդի քարանձավներում, իրականությանը չեն համապատասխանում:

Այսպիսով, Դվինից բացի, միակ տեղը, որտեղ 893 թվականի երկրաշարժի ավերիչ ազդեցության մասին ստույգ տեղեկություններ կան – Վայոց Ձորում գտնվող Խոտակերաց վանքի շրջակայքն է:

Հեղինակը շնորհակալություն է հայտնում հոդվածի գրախոս Ա.Վ.Ավագյանին աշխատանքի արդյունավետ քննարկման և լրացուցիչ տվյալների տրամադրման համար:

Գրականություն

Այրիվանեցի Մխիթար: 1860. Պատմութիւն հայոց, Մոսկվա, տպ. Լազարեան ճեմարանի, 69 էջ:

Արաբական աղբյուրներ, պրակ.Գ, Թ-Ժ դարեր: 2005.Երևան, ԵՊՀ, 704 էջ:

Արծրունի Թովմա և Անանուն: 1985. Պատմություն Արծրունյաց տան, Երևան, «Սովետական գրող», 407 էջ:

Գանձակեցի Կիրակոս: 1982. Հայոց պատմություն, Երևան, «Սովետական գրող», 352 էջ:

Դրասխանակերտցի Հովհաննես: 1996. Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 397 էջ:

Խորենացի Մովսես: 1997. Հայոց պատմություն, Երևան, «Հայաստան», 552 էջ:

Հարությունյան Ռ. Ա.: 2019. Խոտակերաց վանքի (ՀՀ Վայոց Ձորի մարզ) IX-X-րդ դարերում ավերումների երկրաբանական պատճառների մասին: Երևան, ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, N 2, 64-73:

Ղաֆադարյան Կ. Գ.: 1952. Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. I, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ. 299 էջ:

Ղաֆադարյան Կ. Գ.: 1966. Դվին քաղաքի հիմնադրման ժամանակի և միջնաբերդի հեթանոսական մեհյանի մասին. Պատմա-բանասիրական հանդես, №2. էջ 41-58.

Քալանթարյան Ա. Ա.: 1992. Նոր տվյալներ Դվինի VII դ. կաթողիկոսարանի վերաբերյալ. Լրաբեր Հասարակական Գիտությունների, № 1. էջ 116-125.

Քոչարյան Գ. Գ. 2014. Անտիկ Դվինը ամրոց-սրբավայրից արքայանիստ քաղաք, Երևան, Բանբեր հայագիտության, № 1, էջ 31-33:

Օրբելյան Ստեփանոս: 1986. Սյունիքի պատմություն. Երևան, «Սովետական գրող», 616 էջ:

al-Tabari. 1985. History of al-Tabari, Vol. 38: The Return of the Caliphate to Baghdad, New York, State University Press, p. 239.

Ambraseys N.N. and Melville C.P. 1982. A history of Persian earthquakes. London, Cambridge University Press, 219p.

Karakhanyan A., Avagyan A., Baghdasaryan H., Avanesyan M., Arakelyan A. 2011. Seismic hazard assessment for the construction site of a new power unit of the Armenian NPP/ Final Report /Geological database/ “NorAtom” Consortium, Draft Version, February 2011, 274 p.

Karakhanyan A.S., Arakelyan A., Avagyan A., Sadoyan T. 2016. Aspects of the seismotectonics of Armenia: New data and reanalysis, in Sorkhabi, R., ed., Tectonic Evolution, Collision, and Seismicity of Southwest Asia: In Honor of Manuel Berberian`s Forty Years of Research Contributions: Geological Society of America Special Paper 525, p.445-477.

ЕЩЕ РАЗ О РАЗРУШИТЕЛЬНЫХ ЗЕМЛЕТРЯСЕНИЯХ IX ВЕКА В ДВИНЕ (АРМЕНИЯ): РАЗРУШЕНИЯ, ВЫЗВАННЫЕ ЗЕМЛЕТРЯСЕНИЯМИ

Арутюнян Р.А.

Продолжается публикация результатов анализа исторических свидетельств и результатов полевых исследований о спорных характеристиках разрушительных землетрясений IX века в городе Двин. Здесь, во второй статье, посвященной этой теме, основное внимание уделено уточнению территорий, на которых землетрясения вызвали разрушения.

THE DESTRUCTIVE EARTHQUAKES OF THE 9TH CENTURY IN DVIN (ARMENIA) REVISITED: THE DESTRUCTIONS CAUSED BY EARTHQUAKES

Haroutiunian R.A.

The publication of the results of the analysis of historical evidence and the results of field research on the controversial characteristics of the destructive earthquakes of the 9th century in Dvin continue. Here, in the second article on this topic, the main focus is on clarifying the areas where earthquakes caused destruction.